

ԷԴՈՒԱՐԳ ԱՔԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ծննդյան 90-ամյակին)



Լրացավ հայտնի երկրաբան-գիտնական, օգտակար հանածոների հանքավայրերի խոշոր մասնագետ, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Օգտակար հանածոների բաժնի երկարամյա ղեկավար, երկրաբանա - հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Աբելի Խաչատրյանի ծննդյան 90-ամյակը:

Է. Խաչատրյանը ծնվել է 1920թ. Թբիլիսիում, վախճանվել է 1982 թ. Երևանում: 1937թ. Է. Խաչատրյանը ընդունվել է Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, երրորդ կուրսից տեղափոխվել է Վրաստան ու շարունակել

ուսումը Թբիլիսիի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում, որն ավարտել է 1941թ.-ին՝ ստանալով երկրաբանի մասնագիտություն:

1943թ.-ից նրա գիտական ուսումնասիրությունները սերտորեն կապված են եղել ՀՍՍՀ ԳԱ-ի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ, ուր անցել է կրտսեր գիտական աշխատողից մինչև ավագ գիտական աշխատողի ուղին, ինստիտուտի գիտական քարտուղար, իսկ 1957թ.-ից՝ Օգտակար հանածոների բաժնի վարիչ: Սյդ տարիներին նա ընդգրկվել է ակադեմիկոս Հ.Գ. Մաղաքյանի ղեկավարությամբ ինստիտուտում իրականացվող կարևոր գիտահետազոտական ծրագրերում՝ մասնակցելով ՀՍՍՀ-ի, Փոքր Կովկասի հանքառաջացման և մետաղագոյացման քարտեզների կազմման աշխատանքներին, ղեկավարել է ԵԳԻ երկրաբանա-երկրաֆիզիկական արշավախումբը: Համալիր ուսումնասիրություններ է կատարել Հյուսիսային և Կենտրոնական Հայաստանի՝ Կողբի հանքային դաշտում և Աբովյանի շրջանի Կապուտանի երկաթի հանքավայրի տարածքում: Այստեղ նրա կողմից առաջին անգամ հայտնաբերվել է մագնիսական անոմալիա՝ կապված ապատիտ - մագնետիտային տիպի հանքայնացման հետ, դրական են գնահատվել նաև Հրազդանի երկաթի հանքավայրի հեռանկարները: 1953թ. Է. Խաչատրյանի կողմից հրատարակվել է «Հայկական ՍՍՀ երկաթի հանքավայրերի գենետիկական տիպերը և նրանց օգտագործման հեռանկարները» աշխատությունը:

1950թ. Մոսկվայում ՍՍՀՄ ԳԱ Երկրաբանական ինստիտուտում Է. Խաչատրյանը հաջողությամբ պաշտպանել է թեկնածուականատենախոսությունը: 1953թ.-ին նրան շնորհվել է ավագ գիտական աշխատողի կոչում: Նրա հետագա ուսումնասիրությունների արդյունքներն ամ-

փոփոխված են իր կողմից և համահեղինակությամբ գրված մի շարք հրատարակումներում. “Հայկական ՍՍՀ օգտակար հանաժողովները”, 1963թ., “Հայկական ՍՍՀ երկրաբանությունը” VI հատոր, “Մետաղային օգտակար հանաժողովներ”, 1967թ., “Ալավերդու հանքային շրջանը (երկրաբանություն և հանքաբանություն)”, 1968թ., “Հայկական ՍՍՀ հանքային ֆորմացիաների միներալները”, 2 հատորով, 1984թ., 1986թ. և այլն:

Է. Խաչատրյանի հետագա երկու տասնամյակ տևած ուսումնասիրությունները նվիրված են եղել Հայաստանի հրաքարային (կոլչեդանային) մետաղային ֆորմացիաներին՝ Ալավերդու, Կապանի և Տանձուտի ծծմբահրաքարային, պղնձահրաքարային և հրաքարա-բազմամետաղային հանքավայրերին:

1970թ. Է. Խաչատրյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1977թ. լույս է տեսել Է. Խաչատրյանի՝ “Հայկական ՍՍՀ կոլչեդանային ֆորմացիայի հանքանյութերի միներալոգիան, գեոքիմիան և ծագումը” մենագրությունը, որում ամփոփված են հրաքարային հանքավայրերի ձևավորման պայմանները և նրանց սերտ կապը յուրայի և էոցենի հրաքիսածին առաջացումների հետ: Այս աշխատությունում մանրամասնորեն վերլուծված է նաև հրաքարային հանքանյութերի միներալոգիական կազմը՝ պարագենետիկ զուգորդությունները և նրանցում հազվագյուտ և ցրված տարրերի կուտակման և տեղաբաշխման օրինաչափությունները:

Է. Խաչատրյանի ղեկավարությամբ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Օգտակար հանաժողովի բաժնում պատրաստվել են բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետներ, որոնք հաջողությամբ շարունակում են նրա գործը:

Է. Խաչատրյանը 80 գիտական աշխատությունների հեղինակ է, օգտակար հանաժողովների հանքավայրերի ծագման Միջազգային ասոցիացիայի (IAGOD) անդամ: Երկարամյա գիտական գործունեության համար նա պարգևատրվել է “Աշխատանքային խիզախության համար” մեդալով և Հայաստանի ԳԱ “Վաստակագիր” պատվոգրով: Իր հետազոտությունները նա հաջողությամբ համատեղում էր մանկավարժական և հասարակական գործունեության հետ, 1950-1952թթ. ընտրվել է շրջանային խորհրդի պատգամավոր, 1971 – 1975 թթ. եղել է Հայաստանի ԳԱ “Գիտություններ Երկրի մասին” հանդեսի պատասխանատու խմբագիր:

Մեծ գիտնականի, որն իր կյանքը նվիրեց հայրենական գիտությանը ծառայելուն, ազնիվ մարդու և քաղաքացու, բարի հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների և իրեն ճանաչողների հիշողություններում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական
գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր «Գիտություններ
Երկրի մասին» հանդեսի խմբագրություն